368.4
Խ-11

# ՎՈՐՈՇՈՒՄ

ՍԽՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

# ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՈՒՄ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՊԵՏ. ՍՈՑԱՊԳԱՆՁԱՐԿՂԻ ԿՈՄԻՏԵՑԻ
ՅԵՐԵՎԱՆ —— 1928

1 MAR 2010
368.4
Խ-11
Վ.
1003
14335

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՍԽՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

### ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՊԵՏ. ՍՈՑԱՊԳԱՆՁԱՐԿՂԻ ԿՈՄԻՏԵՅԻ
ՅԵՐԵՎԱՆ — 1928

44 075
11 SEP 2013

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 834բ
ՏԻՐԱԺ 5000․

# ՎՈՐՈՇՈՒՄ

## Հ. Ս. Խ. Հ. ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ

(19 մայիսի 1928 թ.)

*ՀՍԽՀ Աշխժողկոմատը վորոշեց հրապարակել ի հանուր գիտություն և կիրառումն ՍԽՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. հոկտեմբերի 26-ի վորոշումը. «Գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին» և ի զարգացումն նրա ՍԽՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Համամիութենական Խորհրդի 1928 թ. մարտի 15-ի № 163 վորոշումը. գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության № 162 կանոնները հաստատելու մասին։*

*Ի. տ. Աշխժողկոմի՝ Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

*Հայաստ. Սոցապ. Հանրապետակ. գանձարկղի*
*նախագահի տեղակալ՝ Ն. ԴԱԴԱՅԱՆ*

# Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՍԽՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

*26 հոկտեմբերի 1927 թ.*

## Գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին

*ՍԽՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են.*

*1. Գյուղացիական այն տնտեսությունները, վորոնց վրա չեն տարածվում գյուղացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանքը կիրառելու մասին գործադրության մեջ դրված կանոնները (արդյունաբերական տիպի տնտեսություններ), ապահովագրում են իրենց մոտ վարձու աշխատանքով զբաղված անձանց պարտադիր կարգով։*

*2. Արդյունաբերական տիպի գյուղացիական տնտեսությունները սոցապվճար են մուծում իրենց մոտ վարձու աշխատանքով զբաղված անձանց աշխատավարձի $10^{0}/_{0}$-ի չափով ($7,5^{0}/_{0}$ սոցապմարմինների տրամադրության*



*տակ յեղած ֆոնդի հաշվին և $2,5^{0}/_{0}$ բուժոգնության ֆոնդի հաշվին) հետևյալ դեպքերում։*

*ա) Յերբ տնտեսությունում կիրառվում է միաժամանակ վոչ պակաս քան 3 բատրակի կամ բատրակուհու աշխատանք գյուղատնտեսական ամբողջ սեզոնի ընթացքում (տվյալ շրջանի դաշտային աշխատանքների սկզբից մինչև վերջը)։*

*բ). Յերբ ծխի (տան) անդամները պարտավոր են վոչ ցածր քան 2-րդ կարգի արտոնագիր (պատենտ) ընտրելու իրենց արդյունաբերական կամ առևտրական ձեռնարկության համար և կամ միջնորդական զբաղմունքի համար, անկախ արտոնագրի կարգից։*

*3. Սույն վորոշման 2-րդ հոդվածի տակ չընկնող գյուղացիական տնտեսությունները, վորոնք Միութենական Հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների հրահանգներով (ծանոթ.—գյուղացիական տնտեսություններում վարձու ոժանդակ բանվորական ուժ կիրառելու պայմանների ժամանակավոր կանոնների 1-ին հոդ.) դասված են արդյունաբերական տնտեսությունների թվում, իրենց մոտ վարձով աշխատող անձանց համար սոցապվճար են մուծում աշխատավարձի $6^{0}/_{0}$-ի չափով ($5^{0}/_{0}$ սոցապմարմինների տրամադրության տակ գտնվող ֆոնդի հաշվին և $1^{0}/_{0}$ բուժոգնության ֆոնդի հաշվին)։*

4. Կոլեկտիվ տնտեսությունները (ընկերություններ, արտելներ, կոմմունաներ) իրենց մոտ վարձով աշխատողներին ապահովագրում են պարտադիր կարգով, մուծելով ապվճար աշխատավարձի 6%-ի չափով (5% սոցապմարմինների ֆոնդի հաշվին և 1% բուժօգնության ֆոնդի հաշվին)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Սույն հոդվածում մատնանշված տնտեսություններին պատկանող տեխնիկական ոժանդակ ձեռնարկություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց և այդ տնտեսություններում աշխատող տեխնիկական կազմի համար (գյուղատնտեսներ, տրակտորիստներ և այլն) սոցապվճար է մուծվում 10%-ի չափով (7,5% սոցապմարմինների տրամադրության տակ գտնվող ֆոնդի հաշվին և 2,5% բուժօգնության ֆոնդի հաշվին)։

5. Համայնական հովիվներ վարձող գյուղական (հողային) համայնքները, նրանց մասերը և գյուղացիների խմբակները, ապահովագրում են իրենց մոտ աշխատողներին պարտադիր կարգով, մուծելով նրանց համար սոցապվճար աշխատավարձի 6%-ի չափով (5% սոցապմարմինների տրամադրության տակ գտնվող ֆոնդի հաշվին և 1% բուժօգնության ֆոնդի հաշվին)։

6. Գյուղատնտեսական այն տնտեսությունները, վորոնց վրա տարածվում են գյուղացիական



տնտեսություններում վարձու ոժանդակ բանվորական ուժ կիրառելու «Ժամանակավոր կանոնների» պայմանները (տնտեսություններ, վորոնցում վարձու աշխատանքը հանդիսանում է ոժանդակ աշխատանք) կարող են իրենց մոտ վարձու աշխատանքով զբաղված անձանց ապահովագրել կամավոր ձևով, մուծելով նրանց համար սոցապմարմինների տրամադրության տակ գտնվող ֆոնդերի հաշվին աշխատավարձի 3%-ի չափով։

Այս հոդվածում մատնանշված գյուղացիական այն տնտեսությունները, վորոնք ապահովագրած չեն լինի իրենց մոտ վարձու աշխատանքով զբաղված անձանց (նաև այս հոդվածի ծանոթությամբ նախատեսված անձանց) պարտավոր են վերջիններին հիվանդության դեպքում, այլև աշխատավորուհիների ծննդաբերության դեպքում, ապահովել նրանց համաձայն վերևում հիշատակված «Ժամանակավոր կանոնների» 13-րդ հոդվածի, իսկ խեղանդամության կամ խեղանդամության հետևանքով առաջացած մահվան դեպքում, ապահովել նրանց ընտանիքներին համաձայն նույն կանոնների 16-րդ հոդվածի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Սոցապմարմինները պարտավոր չեն ապահովագրելու այն անձանց, վորոնք սույն հոդվածում մատնանշված տնտե-

նություններում վարձվում են մեկ ամսից պակաս ժամանակով և 1 ամիս պակաս տևող առանձին աշխատանքներ կատարելու համար։

7. 2—6-րդ հոդվածներում մատնանշված սոցապվճարները մուծվում են վարձողների կողմից իրենց սեփական հաշվին առանց դուրս գալու ապահովագրվածների աշխատավարձից։

8. 2-րդ հոդվածում հիշատակված գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձինք, այլ և 4-րդ հոդվածի ծանոթության մեջ հիշատակված անձինք իրավունք ունին սոցիալական ապահովագրության գծով բոլոր տեսակի ապահովությունները ստանալու։

9. 3-րդ (բացառությամբ ծանոթության մեջ հիշված անձերից) 5-րդ և 6-րդ հոդվածներում հիշատակված գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձինք իրավունք ունին ստանալու սոցիալական ապահովագրության գծով տրվող հետևյալ տեսակների ապահովությունը.

ա) Ժամանակավոր անաշխատունակության նպաստ (նույն թվում և հղության ու ծննդաբերության), բ) հաշմանդամության ապահովություն և ընտանիքի ապահովումն նրա նեցուկի մահվան դեպքում, յեթե հաշմանդամությունը



կամ մահը առաջացել են վարձու աշխատանքի հետ կապված խեղանդամության (հաշմության) հետևանքով, գ) միանվագ նպաստ յերեխային խնամելու համար անհրաժեշտ իրերը գնելու աշխատավորուհու յերեխա ծնելու դեպքում, դ) թաղման նպաստ աշխատավորի (կամ աշխատավորուհու) մահվան դեպքում, յե) բժշկական օգնություն։

10. 2, 3, 4 (բացի ծանոթության մեջ հիշված անձանց համար մուծվող ապվճարներից) 5 և 6-րդ հոդվածներով նախատեսված սոցապվճարները հաշվում են աշխատավորների (բատրակների, բատրակուհիների, հովիվների և այլն) տվյալ խմբակի տվյալ վայրի ամսեկան միջին աշխատավարձից։ Մատնանշված միջին աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր գյուղատնտեսական սեզոնի սկզբին ամբողջ տարվա համար նահանգային, շրջանային կամ համապատասխան սոցապմարմինների կողմից, համաձայնության գալով պատշաճ արհմիությունների (միավորումի) հետ։

4-րդ հոդվածի ծանոթության մեջ հիշված անձանց համար սոցապվճարները հաշվում են ընդհանուր հիմունքներով փաստորեն վճարվող աշխատավարձից։

11. 8 և 9-րդ հոդվածներով նախատեսված

ապահովությունը տրամադրելու պայմաններն ու կարգը, այդ ապահովության չափն ու տևողությունը, այլ և կամավոր սոցիալական ապահովագրությունը իրագործելու պայմաններն ու կարգը (հոդ. 6-րդ) և սոցապվճարները գանձելու կարգը սահմանվում են ՍԽՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Համամիութենական Խորհրդի կողմից։

12. Հանձնարարվում է ՍԽՀՄ Աշխժողկոմատին մշակել և իրագործել սույն վորոշումը կյանքում կիրառելու համար անհրաժեշտ կազմակերպչական միջոցները։

13. Սույն վորոշումը կյանքում ըստ առանձին շրջանների կիրառելու ժամկետները սահմանվում են ՍԽՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցապ. Համամիութ. Խորհրդի կողմից համաձայն Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատներին առընթեր Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների առաջարկությունների։

14. Սույն վորոշումը կիրառելու մասին հրահանգները հրատարակվում են ՍԽՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Խորհրդի կողմից։

15. Լրացնել ՍԽՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1925 թ., փետրվարի 26-ի «Սոցիալական Ապահովագրության սոցապմուծանքների կոպարի մասին» (ՍԽՀՄ Որեն. Ժողովածու 1925 թվի 14, հոդ. 107), վորոշման 7-րդ հոդ. հետևյալ բովանդակությամբ.



«7. Գյուղացիական տնտեսություններում զբաղված անձանց սոցիալական ապահովագրության համար սոցապվճարների կոպարը սահմանվում է առանձին որենքով»։

16. Բանվորական բնակարանների շինարարությանը ոժանդակող միջոցների մասին 1927 թվի հունիսի 15-ի կանոնադրության (ՍԽՀՄ Որեն. Ժողովածու, 1927 թ. № 36, հոդ. 369), 8-րդ հոդվածը արտահայտել հետևյալ խմբագրությամբ.

«8, 5 և 7-րդ հոդվածներում մատնանշված իրավերը և հատկացումները չեն տարածվում այն սոցապվճարների վրա, վոր մուծվում են. ա) սեզոնային և ժամանակավոր աշխատավորների մասնակի ապահովագրման համար. բ) գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց համար, գ) տընայնագործների, արհեստավորների, արդյունագործական կոոպերացիայում և աշխատանքային արտելներում աշխատող աշակերտների սոցիալական ապահովագրության մասին «ՍԽՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. սեպտեմ-

*բերի 7-ի վորոշումով նախատեսված աշակերտների ապահովագրման համար. դ) տեղական ժողլուսբաժինների պայմանագրերով տնայնագործների և արհեստավորների մոտ աշակերտող անապաստան յերեխաների ապահովագրման համար («ՍԽՀՄ Օրեն. Ժողովածու», 1926 թվի № 76, հոդ. 407)։*

*ՍԽՀՄ կենտգործկոմի նախագահ՝*
*Մ. ԿԱԼԻՆԻՆ*

*ՍԽՀՄ ժողկոմխորհի նախագահի*
*տեղակալ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ*

*ՍԽՀՄ կենտգործկոմի*
*քարտուղար՝* [redacted]

*Մոսկվա, Կրեմլ.*
*26 նոյեմբերի 1927 թ.*

---



# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՍԽՀՄ ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

*15 մարտի 1928 թ. № 163*

ՍԽՀՄ կենտգործկոմի յեվ ժողկոմխորհի 1927 թ. նոյեմբերի 26-ի «Գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին» վորոշումը կիրառելու ժամկետի մասին

*«Գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին հրատարակված ՍԽՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. նոյեմբերի 26-ի վորոշման» («ՍԽՀՄ Օրենս. Ժողովածու, 1927 թ. № 60 հոդ. 605) 13-րդ հոդվածի հիման վրա, ՍԽՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Համամիութենական Խորհուրդը վորոշեց.*

*1. Գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին ՍԽՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. նոյ-*

տեմբերի 26-ի վորոշումը (թե պարտադիր և թե կամավոր ապահովագրության նկատմամբ) գործադրության մեջ դնել 1928 թ. մարտի 1-ից այն առանձին շրջաններում, վորոնք հիշատակված են սրան կցվող ցուցակում հաստատված 1928 թ. մարտի 15-ին, ըստ վորում ՍԽՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի մասնանշված վորոշումը (հոդ. 2) անցկացնելու համար վայրերի ցուցակը պիտի կազմել այն հաշվով, վոր տվյալ շրջանի բոլոր վայրերում, ուր պիտի անցկացրվի գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրությունը գյուղացիական տնտեսություններում վարձու անձանց ընդհանուր թիվը չըգերազանցե սրան կցվող ցուցակում մասնանշած ամբողջ շրջանում վարձու աշխատանքով զբաղված անձանց թվին։

2. Այն վայրերի ցուցակը, ուր պիտի անցկացվի գյուղացիական տնտեսություններում զբաղված անձանց սոցիալական ապահովագրությունը, սահմանվում է համապատասխան շրջանի սոցիալական ապահովագրման մարմինների կողմից։

3. Այն շրջաններում, վորոնք չեն մտնում կցվող ցուցակի մեջ, այլ և ցուցակում հիշատակված շրջանային այն վայրերում, ուր հա-



մաձայն սույն վորոշման գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրությունը յենթակա չե իրագործման, սոցիալական ապահովագրական մարմինները կարող են միջմիութենական միավորումների հետ համաձայնության գալ և անցկացնել գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված ապահովագրման յենթակա անձանց սոցիալական ապահովագրությունը։ Սակայն սույն հոդվածում մասնանշված շրջաններում և վայրերում սոցիալական ապահովագրության կիրառումը թույլատրելի յե միայն այն դեպքում, յեթե տվյալ շրջանում կամ վայրում բավականաչափ ճյուղավորված և գյուղերում ապահովագրվածներին սպասարկելու համար հարմարեցրած սոցիալական ապահովագրական ապարատ կա, իսկ նոր ապարատ ստեղծելու անհրաժեշտության դեպքում, միայն այն ժամանակ, յերբ նոր ապարատի պահպանությունը տվյալ շրջանի կամ վայրի տնտեսություններից հասանելի բոլոր սոցապմուծանքների $20^0/_0$-ից չի գերազանցի։

Սոցիալական Ապահովագրության
Համամիութ. Խորհրդի նախագահ՝ Լ. ՆԵՄՉԵՆԿՈ
Գլխ. քարտուղար՝ Վ. ԿՈՒՋԵՑԱՏԻՆ

ՍԽՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Համամիութենական Խորհրդի 1928 թ. մարտի 15-ին ընդ № 162 հաստատված «Գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության կանոններ»։ (Հրատարակված են «Գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին» ՍԽՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. հոկտեմբերի 26 ի վորոշման (ՍԽՀՄ Որենքն. Ժողովածու, 1927 թ. № 60, հոդ. 605 և «ՍԽՀՄ Կենտգործկոմի, Համառուսաստանյան Կենտգործկոմի Իզվեստյա» 1928 թ., 15 մարտի № 63) 11 և 14-րդ հոդվածների հիման վրա։

## 1. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Հետևյալ կատեգորիաների գյուղացիական տնտեսությունները ապահովագրում են իրենց մոտ վարձու աշխատանքով զբաղված անձանց պարտադիր կերպով և սոցապվճար են մուծում հետևյալ չափերով.



## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

### Ա. Արդյունաբերական տիպի տնտեսությունների շարքին պատկանող տնտեսությունները.

| | Սոցիալական ապահովագր. վճարների %-ային հարաբ. աշխատավարձի նկատմամբ |
|---|---|
| 1. Տվյալ վայրում ամբողջ գյուղատնտեսական սեզոնի ընթացքում, դաշտային աշխատանքների սկզբից մինչև վերջը, միաժամանակ 3-ից վոչ պակաս թվով անձանց (բատրակներ) աշխատանքը կիրառող տնտեսությունները ապվճար են մուծում . . . | 10% |
| 2. Այն տնտեսությունները, վորոնց տերերը պարտավոր են արդյունագործական ձեռնարկությունների համար վոչ ցածր քան 2 րդ կարգի արտոնագիր (պատենտ) ընտրելու և կամ առևտրական ձեռնարկությունների համար արտոնագիր ընտրելու անկախ նրա կարգից (կանոնադրություն պետական արդյունագործական հարկի մասին, ՍԽՀՄ Որեն. Ժողովածու, 1926 թ. հոդ. 474-րդ) ապվճար են մուծում . . . | 10% |

3. Այն տնտեսությունները, վորոնք չեն համապատասխանում 1 և 2-րդ կետերում մատնանշված պայմաններին և համաձայն Միութենական Հանրապետության Ժողկոմխորհների հրահանգներով սահմանված կարգի (ՍԽՀՄ Ժողկոմխորհի 1927 թ. 10 հոկտեմբերի խմբագրած «Գյուղացիական տնտեսություններում վարձու ոժանդակ աշխատանք կիրառելու ժամանակավոր կանոնների» 1 հոդվածի ծանոթության, ՍԽՀՄ Որեն. Ժողովածու, 1927 թ. № 60 հոդ. № 609) դասված են արդյունաբերական տիպի տնտեսությունների շարքում, ապվճար են մուծում . . . 6%

Բ. Կոլեկտիվ տնտեսությունները (ընկերությունները, արտելները, կոմունաները յեվ այլն) ապվճար են մուծում . . . . . . . . . . 6%

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս կանոնները չեն տարածվում կոոպերատիվ տնտեսությունների այլ տեսակների վրա, այսինքն տորֆի և և այլն, այլ և կոլեկտիվ տնտեսությունների, միությունների, սեկցիաների, բյուրոների և՛ այլն) վրա, վորոնք պարտավոր են ապահովագրել իրենց մոտ յեղած վարձու աշխատավորներին ընդհանուր հիմունքներով։



Գ. Համայնական հովիվներ յեվ հոտաղներ վարձող գյուղական հողային համայնքները, նրանց մասերը յեվ գյուղացիների առանձին խմբակները ապվճար են մուծում . . . . . . 6%

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Առանձին տնտեսություններում աշխատող հովիվների համար սոցապվճարները գանձվում են նույն հիմունքներով, ինչ վոր գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված մյուս անձանց համար։

2) Գյուղացիական տնտեսություններում զբաղված տեխնիքական ուժի համար (գյուղատնտեսներ, տրակտորիստներ և այլն) սոցապվճար են մուծվում 10%-ի չափով։ Այդ մուծանքները հաշվվում են փաստորեն վճարված ամբողջ աշխատավարձից։

## 2. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒՄԸ

3. Գյուղացիական տնտեսություններում պարտադիր սոցիալական ապահովագրման յենթակա վարձու աշխատավորներ ունեցող անձինք պարտավոր են իրենց տնտեսությունները

տոմարագրել սոցապմարմիններում նահանգային (կամ նրան համապատասխանող) սոցապգանձարկղի կողմից սահմանվող ժամկետներում և կարգով։

Տոմարագրման հայտարարության ձևը սահմանվում է համապատասխան Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատներին առընթեր Սոցապգլխվարչությունների կողմից։

4. Տոմարագրման ժամկետը լրանալուց հետո, սոցապմարմինն ստուգում է հայտարարությունների հիման վրա իր կազմած ցուցակը, օգտվելով ֆինտեսչի, շրջգործկոմի և գյուղխորհրդի տվյալներից և լրացնում է ցուցակը պարտադիր ապահովագրման յենթակա չտոմարագրված տնտեսություններով։

## 3. ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄՆ

5. Գյուղացիական այն տնտեսությունները, վորոնք չեն պատկանում 1-ին հոդվածում մատնանշված գյուղացիական տնտեսությունների կատեգորիաներին, կարող են իրենց մոտ վարձու աշխատանքով զբաղված անձանց ապահովագրել կամավոր կերպով։ Կամավոր սոցիալական ապահովագրման դեպքում ապվճար է մուծվում աշխատավարձի 3%-ի չափով։



6. Գյուղացիական այն տնտեսությունները, վորոնք չեն պատկանում 1-ին հոդվածում մատնանշված գյուղացիական տնտեսություններին և կամենում են իրենց մոտ վարձու աշխատանքով զբաղված անձանց ապահովագրել կամավոր կերպով, գրավոր պայմանագիր են կընքում սոցապմարմինների հետ։

Կամավոր սոցապահովագրության մասին կնքվող գրավոր պայմանագրի տիպիկ ձևը սահմանում են Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատներին առընթեր Սոցիալական Ապահովագրության Գլխավոր Վարչությունները։

7. Սոցապգանձարկղը չի ընդունում այն անձանց կամավոր ապահովագրումը, վորոնք վարձվում են մինչև մեկ ամիս ժամանակամիջոցով կամ վորոնց աշխատանքը մեկ ամսից ավել չի տևելու։

8. Կամավոր ապահովագրումը (հոդ. 5) կատարվում է վորոշ ժամանակի համար, բայց վոչ ավելի քան մեկ տարի ժամանակով։

## 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՎՃԱՐՆԵՐ ՀԱՇՎԵԼՆ ՈՒ ԳԱՆՁԵԼԸ

9. Սոցապահովագրական վճարները գյուղացիական տնտեսություններում զբաղված ան-

ձանց համար թե կամավոր և թե պարտադիր ապահովագրման դեպքում, բացառությամբ 2-րդ հոդվածում մասնանշվածներից, հաշվվում են միջին աշխատավարձից ըստ հետևյալ կարգերի։

## ԿԱՐԳԵՐ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ

| Կարգ | | | | | | | Միջին ամսեկան աշխատավարձ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ամսական | աշխատավարձով | | մինչև | 13 ռ. | | 11 ռուբ. |
| 2 | » | 13 ռ. | բարձր | » | 18 | » | 15 » |
| 3 | » | 18 ռ. | » | » | 22 | » | 20 » |
| 4 | » | 22 ռ. | » | » | 27 | » | 25 » |
| 5 | » | 27 ռ. | » | » | 32 | » | 29 » |
| 6 | » | 32 ռ. | » | » | 40 | » | 34 » |
| 7 | » | 40 ռ. | » | » | — | » | 41 » |

Աշխատավարձը այս կամ այն կարգում դասելիս աշխատավարձի մեջ է մտցրվելու աշխ-պայմանագրով պայմանավորված թե դրամական վարձատրությունը և թե բնականով վարձատրությունը, բացառությամբ աշխատավորին տրամադրվող բնակարանի արժեքից։

10. Սոցապվճարի չափը պարզելուց հետո սոցապմարմինը ուղարկում է վարձողին գրավոր ծանուցում, որում մասնանշվում է աշ-



խատավորների յուրաքանչյուր խմբակի ապվճարի չափը, ապվճարի չափը որոշելու հիմունքները, աշխատավորների թիվը, որոնց համար ապվճար է մուծվելու, աշխատավարձի գումարը, որից ապվճար է հաշված և ապվճարը մուծելու ժամկետն ու տեղը։

Ուղարկվող ծանուցագրում նաև մասնանշված է լինելու, որ վարձողը պարտավոր է աշխատավորների թվի վարձման ժամկետների բոլոր փոփոխումների մասին (ամբողջ գյուղատնտեսական սեզոնի կամ նրա մի մասի նկատմամբ) մի շաբաթվա ընթացքում հաղորդել սոցապմարմնին, որը պատշաճ դեպքերում համապատասխան չափով փոխում է սահմանված ապվճարի չափը։

Ծանուցումը հանձնվում է վարձողին ստացականով ծանուցման պատճենի վրա և հանդիսանում է հաշվական տեղեկագիր, համաձայն որի և մուծվելու յե ապվճարը։

11. Կամավոր ապահովագրման դեպքում ապվճարները մուծվում են առաջուց ոչ պակաս, քան մեկ ամսվա համար։ Պարտադիր ապահովագրման դեպքում ապվճարը մուծվում է անցյալ ամսի համար սոցապգանձարկղի կողմից սահմանված ժամկետներում։

12. Սոցապվճարների ապառքի գանձումը

թե կամավոր և թե պարտադիր ապահովագրման դեպքում կատարվում է անվիճելի հարկադրական գանձման կարգով ընդհանուր հիմունքներով, համաձայն ՍԽՀՄ և Միութենական Հանրապետությունների օրենսդրությունների։

13. Ապվճարների մուծումը 2 ամսից ավելի ուշացնելու, այլ և կրկնողական ուշացման, սոցապմարմիններում տոմարագրվելուց խուսափելու, սոցապմարմիններին պահանջվող տեղեկությունները չհաղորդելու և կամ դիտավորյալ սուտ տեղեկություններ հաղորդելու համար, հանցավորները քրեական կամ վարչական պատասխանատվության են յենթարկվում, համաձայն Միութենական Հանրապետությունների օրենսդրությունների։

## 5. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ

14. ՍԽՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. հոկտեմբերի 26-ի վորոշման ներգործության տակ ընկնող գյուղացիական տնտեսություններում զբաղված թե պարտադիր և թե կամավոր կերպով ապահովագրման յենթակա անձինք, իսկ պատշաճ դեպքում, նրանց ընտա-



նիքների անդամները իրավունք ունեն ապահովվելու։

ա) Հիվանդության հետևանքով ժամանակավոր անաշխատանակության նպաստով վոչ ավելի 26 շաբաթից պարտադիր ապահովագրման դեպքում և վոչ ավելի 13 շաբաթից կամավոր ապահովագրման դեպքում։

բ) Աշխատանքային խեղանդամության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության նպաստով, ժամանակավոր անաշխատունակության առաջին որից մինչև աշխատունակությունը վերականգնելու որը կամ մինչև աշխատանքի անկարությունը հաստատելու որը։

գ) Հղության և ծննդաբերության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության նպաստով 4 շաբաթ մինչ ծննդաբերությունը և 4 շաբաթ էլ ծննդաբերությունից հետո։

դ) Միանվագ նպաստով, յերբ ապահովագրված աշխատավորուհին յերեխա յե ծնում։

յե) Թաղման նպաստով ապահովագրվածի մահվան դեպքում։

զ) Աշխատանքի անկարության և մահացածի ընտանիքի կենսաթոշակներով, յեթե աշխատանքի անկարությունը և մահը առաջացած են

վարձու աշխատանքի հետ կապված դժբախտ պատահարի հետևանքով։

15. Հիվանդության, աշխատանքային խեղանդամության, հղության և ծննդաբերության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության նպաստները տրվում են ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բոլոր բաց թողված բանվորական տոմարագրական օրերի համար 14-րդ հոդվածում մատնանշված ժամկետների սահմաններում։

Օրական նպաստը սահմանվում է հետևյալ կայուն չափերով ըստ աշխատավարձի կարգերի.

ԿԱՐԳԵՐՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ

| Կարգ | ամսեկան | աշխվարձով | մինչև | Միջին ամսեկան աշխատավ. | Օրեկան նպ. չափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | 13 ռ. | 11 ռ. | 25 կ. |
| 2 | » | » | » 13—18 | 15 | 35 |
| 3 | » | » | » 18—22 | 20 | 45 |
| 4 | » | » | » 22—27 | 25 | 55 |
| 5 | » | » | » 27—32 | 29 | 65 |
| 6 | » | » | » 32—40 | 34 | 75 |
| 7 | » | » | » 40 — | 41 | 90 |

16. Հղության և ծննդաբերության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխա-



տունակության նպաստը տրվում է ապահովագրված աշխատավորուհիներին այն դեպքում, յերբ նրանք մինչ հղության պատճառով աշխատանքից արձակուրդ ստանալը նախորդ յերկու տարվա ընթացքում վարձու աշխատանքի 6 ամսվա ստաժ ունենան։

17. Այն վայրերում, ուր բժշկական վերահսկողության մարմինները և բժիշկներ կան, գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձինք աշխատանքի արձակուրդ են ստանում բոլոր ապահովագրվածների համար սահմանված ընդհանուր կարգով։

Այն վայրերում, ուր բժշկական վերահսկողության մարմիններ և բժիշկներ չկան, աշխատանքից արձակուրդ ստանալու իրավունքը սոցապգանձարկղի և տեղական Առբաժնի փոխադարձ համաձայնությամբ կարող է տրամադրվել բուժակայանի վարիչին։

Թե վորքան ժամանակով կարող են աշխատանքից արձակուրդ ստանալ, ժամկետը սահմանվում է Սոցապգանձարկղի կողմից, նայած թե բուժակակայանը վորքան հեռու յե մոտակա բժշկական կայանից։

18. Ժամանակավոր անաշխատունակության նպաստն ստանալու համար ապահովագրվածը ներկայացնելու յե հետևյալ փաստաթղթերը.

ա) Աշխատանքային պայմանագիրը կամ հաշվեգրքույկը։

բ) Հիվանդանոցային թերթիկ, տրված բըժշկական կազմին պատկանող անձից (հոդ. 17)

գ) Յերբ հղության և ծննդաբերության հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստ է պահանջում ապահովագրվածը, բացի «ա» և «բ» կետերում մատնանշված փաստաթղթերից պարտավոր է ներկայացնելու վարձու աշխատանքի 6 ամսվա ստաժը ապացուցող փաստաթղթեր։

19. Աշխատավորուհիներին յերեխա ծնելիս միանվագ նպաստը տրվում է (հոդ. 14, կետ «դ») յեթե նրանք մինչև հղության հետևանքով արձակուրդ ստանալը նախորդ յերկու տարվա ընթացքում աշխատանքային 6 ամսվա ստաժ ունենան։

Աշխատավորուհուն յերեխա ծնվելու դեպքում միանվագ նպաստը սահմանվում է 10 ռ. չափով։

20. Յերեխայի համար միանվագ նպաստ պահանջելիս ապահովագրված աշխատավորուհին ներկայացնելու յե հետևյալ փաստաթղթերը.

ա) Աշխատանքային պայմանագիրը կամ հաշվեգրքույկը։



բ) Զագսի վկայականը յերեխայի ծննդյան մասին։

գ) Փաստաթղթեր վարձու աշխատանքի 6 ամսվա ստաժի մասին։

21. Ապահովագրվածների (հոդված 14 կետ «դ») թաղման նպաստը տրվում է 10 ռ. չափով։ Այդ նպաստը ստանալու իրավունքը վայելում են՝ մահացածի ամուսինը, ծնողները, զավակները, յեղբայրները և քույրերը։

22. Ապահովագրվածի թաղման նպաստ ըստանալու համար դիմող անձը ներկայացնելու յե հետևյալ փաստաթղթերը.

ա) Մահացածի աշխատանքային պայմանագիրը կամ հաշվեգրքույկը։

բ) Զագսի վկայականը մահվան մասին։

գ) Նպաստը ստանալու համար դիմող անձի մահացածի հետ ունեցած ազգակցական կապը ապացուցող փաստաթուղթը (հոդ. 21)։

23. Աշխատանքի անկարության դեպքում ամսեկան կենսաթոշակը նշանակվում է հետևյալ կայուն չափերով ըստ աշխատավարձի կարգի (հոդ. 9) և աշխանկարության խմբերի։

| ԿԱՐԳԵՐ ԸՍՏ ԱՇԽԱՏԱ-ՎԱՐՁԻ | | | Միջին ամսեկան աշխատավարձ | Ամսեկան կենսաթոշակի չափը | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին խմբակ | 2-րդ խմբակ | 3-րդ խմբակ |
| 1 կարգ | ամիսը | մինչև | 13 ռ.—11 ռ. | 5 ռ. 50 կ. | 4 ռ. 25 կ. | 2 ռ. 75 կ. |
| 2 » | » | » | 13—18—15 | 7 » 50 » | 5 » 75 » | 3 » 75 » |
| 3 » | » | » | 18—22—20 | 10 » — » | 7 » 50 » | 5 » — — |
| 4 » | » | » | 22—27—25 | 12 » 50 » | 9 » 25 » | 6 » 25 » |
| 5 » | » | » | 27—32—29 | 14 » 50 » | 11 » — — | 7 » 25 » |
| 6 » | » | » | 32—40—34 | 17 » — » | 12 » 75 » | 8 » 50 » |
| 7 » | » | » | 40—41 — | 20 » 50 » | 15 » 50 » | 10 » 25 » |



24. Վարձու աշխատանքի հետ կապված դժբախտ պատահարի հետևանքով ընտանիքի նեցուկի մահվան դեպքում (հոդ. 14, կ. «գ») կենսաթոշակ են ստանում ընտանիքի հետևյալ անդամները։

ա) 15 տարեկան հասակի չհասած զավակները, յեղբայրներն ու քույրերը։

բ) Անաշխատունակ զավակները, յեղբայրները և քույրերը, յեթե իրենց աշխատունակությունը կորցրել են մինչ 15 տարեկան դառնալը։

գ) Անաշխատունակ ծնողները և ամուսինը։

Կենսաթոշակի իրավունքը վայելում են մահացածի ընտանիքի մասնանշված անդամներից նրանք, վորոնք ապրելիս են յեղել մահացածի հաշվին և նրա հետ միասին մի ընտանեկան տնտեսություն են ունեցել։

25. Ընտանիքի նեցուկի մահվան դեպքում կենսաթոշակ է նշանակվում ըստ աշխատավարձի կարգերի (հոդ. 9) և ապահովվող ընտանիքի անդամների թիվ հետևյալ կայուն չափերով։

## ԿԱՐԳԵՐ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԵԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

| Կարգեր ըստ աշխատավարձի | Առողջ անձին միայնակին | 3 և ավելի անդ. բաղկ. ընտանիքին | 2 անդ. բաղկացած ընտանիքին | 1 անդ. բաղկացած ընտանիքին |
|---|---|---|---|---|
| 1 կարգ ամս. աշխվարձ մինչև 13 ռ. | — 11 | 4—25 | 2—75 | 2—— |
| 2 » » » » 13—18 | — 15 | 5—75 | 3—75 | 2—50 |
| 3 » » » » 18—22 | — 20 | 7—50 | 5—— | 3—50 |
| 4 » » » » 22—27 | — 25 | 9—25 | 6—25 | 4—25 |
| 5 » » » » 27—32 | — 29 | 11—— | 7—25 | 4—75 |
| 6 » » » » 32—40 | — 34 | 12—75 | 8—50 | 5—75 |
| 7 » » » » 40—— | — 41 | 15—50 | 10—25 | 7—— |



26. Կենսաթոշակը աշխանկարության կամ ընտանիքի նեցուկի մահվան հետևանքով (հոդվածներ 23 և 25) նշանակվում է ըստ աշխատավարի (կամ մահացած նեցուկի) աշխատավարձի այն կարգի, որով համաձայն 9-րդ հոդվածի նրա համար սոցապահովագրման համար վճարներ պետք է մուծվեին ըստ վերջին աշխատատեղի։

27. Աշխանակարության ընտանիքի նեցուկի մահվան հետևանքով նշանակված կենսաթոշակը տրվում է ամեն ամիս։

28. Աշխանկարության թոշակ նշանակելու համար դիմող անձինք ներկայացնելու յեն հետևյալ փաստաթղթերը.

ա) Աշխատանքային պայմանագիր կամ հաշվեգրքույկ։

բ) Բժշկական պատահարի մասին արձանագրություն՝ կազմած աշխատեղի, գյուղխորհրդի կամ միլիցիայի կողմից։

29. Մահացած նեցուկի ընտանիքի անդամները կենսաթոշակ նշանակելու մասին դիմելիս ներկայացնելու յեն հետևյալ փաստաթղթերը.

ա) Մահացածի աշխատանքային պայմանագիրը կամ հաշվեգրքույկը։

բ) Մահացածի հետ պատահած դժբախտ

դեպքի արձանագրությունը կազմած աշխատեսչի, գյուղխորհրդի կամ միլիցիայի կողմից։

գ) Զագսի վկայականը նեցուկի մահվան մասին։

դ) Մահացածի խնամքի տակ գտնվելը և նրա հետ միասին մի ընտանեկան տնտեսություն ունենալը հաստատող փաստաթղթերը.

յե) Թոշակ նշանակելու մասին դիմող անձանց և մահացածի մեջ յեղած ազգակցությունը հաստատող փաստաթղթեր (ծննդյան վկայականներ, անձնական վկայագրեր և այլն)։

30. Գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց, վորոնց ապահովագրման համար ապվճար մուծվում է 10%-ի չափով (բաժին ա., հոդ. 1, կետ. 1 և 2), բացի 14-րդ հոդվածում մատնանշված ապահովության տեսակներից տրվում է նաև ապահովություն գործազրկության դեպքում։ Այն անձանց, վորոնք վարձված են յեղել մեկ ամբողջ տարով և կամ աշխատանք կատարելու մեկ ամբողջ տարվա ընթացքում, գործազրկության նպաստը տրվում է վոչ ավելի քան 3 ամիս մի տարվա ընթացքում և վոչ ավելի քան 6 ամիս գործազրկության մի շրջանում 2 տարվա ընթացքում։ Մատնանշված անձանց, յեթե նրանք վարձված են սեզոնային կամ ժամանա-



կավոր աշխատանքի համար, գործազրկության նպաստը տրվում է միմիայն սեզոնի ժամանակ տեղի ունեցած գործազրկության դեպքում վոչ ավելի քան 2 ամիս տվյալ սեզոնի ընթացքում։

31. Գործազրկության նպաստը (հոդ. 30) տրվում է այն անձանց, վորոնց համար վարձու աշխատանքը հանդիսանում է ապրուստի միակ աղբյուրը և վորոնք մինչ գործազրկությունը վերջին 2 տարվա ընթացքում վարձու աշխատանքով զբաղվել են վոչ պակաս քան 8 ամիս։

32. Գործազրկության նպաստը չի տրվում գյուղացիական տնտեսություն ունեցող անձանց։

33. 30-րդ հոդվածում մատնանշված անձանց գործազրկության նպաստ է տրվում ամիսը 4 ռուբլի։

34. Գործազրկության նպաստ ստանալու համար դիմող անձինք ներկայացնելու յեն հետևյալ փաստաթղթերը.

ա) Աշխժողկոմատի միջնորդական մարմնի վկայականը, իսկ ուր այդպիսին չկա, արհմիության վկայականը իբրև գործազուրկ հաշվառման մեջ լինելու մասին։

բ) Վերջին աշխատատեղի աշխատանքային պայմանագիրը կամ հաշվեգրքույկը, մատնանշելով աշխատանքը դադարեցնելու ժամանակը

և արհմիության տեղեկանքը այն մասին, թե տվյալ անձը արձակված է յեղել, թե կամովին է հեռացել աշխատանքից։

գ) Փաստաթղթեր վարձու աշխատանքի 8 ամսյա ստաժ ունենալու մասին։

դ) Փաստաթղթեր գյուղացիական տնտեսություն չունենալու մասին։

35. Յերբ գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձը դիմում է նպաստ կամ թոշակ նշանակելու մասին, այլ և յերբ գյուղացիական տնտեսությունում զբաղված անձի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամն է դիմում թոշակ կամ նպաստ ստանալու համար, Սոցապմարմինը ստուգում է, թե տվյալ գյուղացիական տնտեսությունները արդյոք տոմարագրված են իբրև պարտադիր ապահովագրման յենթակա տնտեսություններ. Թոշակ կամ նպաստ նշանակելու մասին դիմող անձը կամ մահացածը կամավոր ապահովագրվածների ցուցակում հիշատակված է թե վոչ։

Յեթե պարզվի, վոր համապատասխան գյուղացիական տնտեսությունները Սոցապմարմիններում տոմարագրված չեն և մատնանշված անձինք կամովին ապահովագրվածների ցուցակում չեն հիշատակված, այդ դեպքում Սոցապ-



մարմինը հետազոտում է համապատասխան գյուղացիական տնտեսությունը, պարզելու թե արդյոք այդ տնտեսությունը պատկանում է այն գյուղացիական տնտեսությունների թվին, վորոնցում վարձու աշխատանքով զբաղված անձինք յենթակա յեն պարտադիր ապահովագրման թե վոչ։

Համեմատ հետազոտման արդյունքի ել Սոցապմարմինը լուծում է թոշակ կամ նպաստ նշանակելու հարցը և միջոցներ է ձեռք առնում գանձելու ապվճարները գյուղացիական տնտեսություններից, վորոնք պարտավոր եյին ապահովագրելու իրենց վարձու աշխատավորներին և համաձայն 13-րդ հոդվածի հանցավորների քրեական պատասխանատվության յենթարկում։

36. Թե պարտադիր և թե կամավոր կարգով ապահովագրված անձինք իրավունք ունեն սոցապգծով ապահովվելու անկախ վարձողի կողմից սոցապվճարը փաստորեն կատարվելու հանգամանքից, ըստ վորում կամավոր ապահովագրման դեպքում սոցիալական ապահովագրությունը տրվում է միայն ապահովագրական այն դեպքերում, վորոնք տեղի յեն ունեցել ապագանձարկղի և վարձողի միջև կնքած պայմանագրի ժամկետի ընթացքում, մինչև նրա դադարեցման որը (հոդ. 8)։

ՀՀ Ազգային գրադարան
NL0212750

44.075